

Հավելված 1

Հայաստանի Հանրապետության

Շիրակի մարզի Գյումրի համայնքի

ավագանու 2023 թվականի

սեպտեմբերի 12-ի N 159-Ա որոշման



ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ

**2024 - 2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ
ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐ**

Հաստատված է Հայաստանի Հանրապետության

Շիրակի մարզի Գյումրի համայնքի

ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 12-ի N 159-Ա որոշմամբ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Վարդգես Մելիկի Սամսոնյան

(անունը, հայրանունը, ազգանունը)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ

**2024 - 2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ
ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐ**

**2024 - 2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ
ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

1. Համայնքի 2024 - 2026 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրի կազմման հիմք է հանդիսացել համայնքի 2022-2026 թվականների հնգամյա զարգացման ծրագիրը: Գյումրի համայնքի բյուջեի սեփական եկամուտների հավաքագրումից, ՀՀ պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիայից, նպատակային հատկացումներից (սուբվենցիա) գոյացած եկամուտները հատկացվելու են համայնքի հնգամյա զարգացման ծրագրով սահմանված դրույթների իրականացմանը, ապահովելով օրենսդրությամբ ամրագրված լիազորությունների շրջանակում տեղական ինքնակառավարման մարմինների կողմից համայնքի բնակչության բարեկեցության բարձրացմանը, համայնքային ենթակառուցվածքների արդիականացմանը, սոցիալապես անապահով խավերի սոցիալական և կենցաղային պայմանների բարելավմանը, մշակութային և մարզական կյանքի աշխուժացմանը, ենթակառուցվածքների զարգացման և պատմամշակութային արժեք ներկայացնող միջավայրի վերականգնման միջոցով զբոսաշրջության համար միջազգային ստանդարտներին համապատասխան առավել գրավիչ պայմանների ստեղծմանը:

2. Համայնքի 2024 - 2026 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրի նախագծում որպես հիմնական ուղղություններ առանձնացվել են՝

1) տեղական ինքնակառավարման մարմնի և համայնքային կառույցների կողմից համայնքի բնակիչներին որակյալ և մատչելի ծառայությունների մատուցման,

2) համայնքին պատկանող հողատարածքների նկատմամբ իրավունքի պետական գրանցման, քաղաքաշինական փաստաթղթերի կազմման, դրանցում փոփոխություններ կատարելու, առկա քաղաքաշինական խնդիրներին և մարտահրավերներին մասնագիտական լուծումներ տալու,

3) համայնքային միջոցների հաշվին բազմաբնակարան շենքերի տանիքների, մուտքերի և ընդհանուր օգտագործման այլ տարածքների վերանորոգման,

4) սեփական եկամուտների, ՀՀ պետական բյուջեի, Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի ու Համաշխարհային բանկի կողմից հատկացված վարկային և դրամաշնորհային միջոցների հաշվին փողոցների, մայրերի ասֆալտապատման ու բարեկարգման, քաղաքային լուսավորության ցանցի լուսակետերի ավելացման ու արդիականացման,

5) Գյումրի համայնքի աղբահանության ու սանմաքրման կազմակերպման, զբոսայգիների և պուրակների կանաչապատ տարածքների ավելացման և պահպանման,

6) ՀՀ գործող օրենսդրության շրջանակներում, ոչ հարկային եկամուտների, տեղական տուրքերի և վճարների սահմանման կանխատեսելի քաղաքականության և տնտեսական գործունեություն ծավալելու համար հողհատկացումներ կատարելու, դրանց շուրջ ենթակառուցվածքներ ստեղծելու միջոցով գործարար միջավայրի և համայնքային տնտեսության զարգացման,

7) ներգրավելով համայնքում առկա քաղաքացիական հասարակության և փորձագիտական խմբերի կարողությունները, միջազգային ընդունված փորձի հիման վրա քաղաքում ներդրումային միջավայրի բարելավմանը միտված ծրագրային փաթեթների մշակման և համապատասխան մասնագիտական քննարկումների անցկացման,

8) Գյումրի համայնքում կրթական, մշակութային և մարզական կյանքի աշխուժացման

ու զարգացմանն ուղղված միջոցառումների կազմակերպման ու անցկացման,

- 9) համայնքային ենթակայության մանկապարտեզներ և արտադպրոցական դաստիարակության ծառայություններ մատուցող հաստատություններ հաճախող, սոցիալապես անապահով երեխաների վարձի մասնակի և ամբողջական փոխհատուցման, մանկապարտեզներին որոշակի գույքով ապահովման, ջեռուցման խնդրի կարգավորման, համայնքային ենթակայության արտադպրոցական կրթական կառույցների հիմնանորոգման ու կահավորման, մարզադպրոցների վերանորոգման և մարզական տարածքների բարեկարգման ծրագրերի իրականացման,
- 10) համայնքի վարչական տարածքում ճարտարապետական հուշարձանների վերանորոգման, ինչպես նաև նստարանների և գրուցարանների ավելացման,
- 11) առևտրի և սպասարկման ոլորտում գործունեության, օրենքին չհակասող լրացուցիչ կանոնների և պայմանների մշակման շնորհիվ, քաղաքում բացօթյա առևտուրը քաղաքակիրթ և հարմարավետ դարձնելուն միտված աշխատանքների իրականացման,
- 12) համայնքի սոցիալապես անապահով խավերի ֆինանսական, կենցաղային պայմանների բարելավման, դրանցից օգտվելու հասանելիության և սոցիալական խնդիրների լուծման ուղղությունները:

ՀԱՄԱՅՆՔԻ 2024 - 2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՆԱԽԱԳԾՈՎ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Համայնքի 2024-2026 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրի նախագծով եկամուտների կանխատեսումներն իրականացնելիս հաշվի է առնվել տեղական ինքնակառավարման մարմինների կողմից, ոլորտը կարգավորող օրենսդրությամբ սահմանված աղբյուրներից համայնքային բյուջե ձևավորելու իրավական հիմքերը, մոտ անցյալում համայնքային բյուջե փաստացի հավաքագրված եկամտային հոսքերը և առկա բազաների տվյալները:

Վարչական բյուջեի սեփական եկամուտների կանխատեսումը ընդգրկում է հարկային եկամուտները (անշարժ գույքի հարկ և փոխադրամիջոցների գույքահարկ), տեղական տուրքերը և ոչ հարկային եկամուտները (տեղական վճարներ):

Փոխադրամիջոցների գույքահարկը կանխատեսվում է 2024թ. համար՝ 945625.2 հազ. դրամ, 2025թ. համար՝ 945625.2 հազ. դրամ, 2026թ. համար՝ 945625.2 հազ. դրամ:

2024թ. համար փոխադրամիջոցների գույքահարկը կանխատեսելիս հիմք են հանդիսացել 2023թ. օգոստոսի դրությամբ առկա բազաները, 2024-2026թթ. համար կանխատեսվել է 9.4% աճ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետություն մեքենաների ներկրման ծավալի աճը:

Անշարժ գույքի հարկը կանխատեսվում է 2024թ. համար՝ 319334.5 հազ. դրամ, 2025թ. համար՝ 479991.7 հազ. դրամ, 2026թ. համար՝ 639988.9 հազ. դրամ:

2024 թվականի անշարժ գույքի հարկը կանխատեսելիս հիմք են հանդիսացել 2023թ. օգոստոսի դրությամբ առկա բազաները: 2024 թվականի համար անշարժ գույքի հարկը (բացառությամբ գյուղատնտեսական նշանակության հողերի) հաշվարկվում է անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքների և Հարկային օրենսգրքի 229-րդ հոդվածի 1-ին մասի 2-7-րդ կետերով սահմանված դրույքաչափերի արտադրյալի 50 տոկոսի չափով, 2025 թվականի համար՝ 75 տոկոսի չափով և 2026

թվականի և հետագա տարիների համար՝ 100 տոկոսի չափով:

Տեղական տուրքերը կանխատեսվում է 2024թ. համար՝ 123720.9 հազ. դրամ, 2025թ. համար՝ 125118.9 հազ. դրամ, 2026թ. համար՝ 126583.7 հազ. դրամ:

Պետական տուրքերը 2024-2026թթ. համար կանխատեսվել են տարեկան 47500.0 հազ. դրամ:

Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարները կանխատեսվում են կանխատեսվում է 2024թ. համար՝ 123635.1 հազ. դրամ, 2025թ. համար՝ 124770.8 հազ. դրամ, 2026թ. համար՝ 126670.8 հազ. դրամ: 2024-2026թթ. համար կանխատեսվել է 0.9-2.5% աճ հաշվի առնելով նոր վարձակալության պայմանագրերի կնքման, որոշ պայմանագրերի դադարեցման, բազաների ճշգրտման գործընթացի շարունակականությունը:

Այլ գույքի վարձակալությունից մուտքերը կանխատեսվում է 2024թ. համար՝ 38251.2 հազ. դրամ, 2025թ. համար՝ 38300.0 հազ. դրամ, 2026թ. համար՝ 38300.0 հազ. դրամ:

Տեղական վճարները կանխատեսվում է 2024թ. համար՝ 483360.5 հազ. դրամ, 2025թ. համար՝ 486484.5 հազ. դրամ, 2026թ. համար՝ 489584.5 հազ. դրամ:

Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարները կանխատեսվում է 2024թ. համար՝ 60000.0 հազ. դրամ, 2025թ. համար՝ 60000.0 հազ. դրամ, 2026թ. համար՝ 60000.0 հազ. դրամ:

Վարչական իրավախախտումների համար տեղական ինքնակառավարման մարմինների կողմից պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտները կանխատեսվում են 2024թ. համար՝ 8750.0 հազ. դրամ, 2025թ. համար՝ 8750.0 հազ. դրամ, 2026թ. համար՝ 8750.0 հազ. դրամ:

Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջեի մուտքագրման ենթակա այլ եկամուտները կանխատեսվում են 2024թ. համար՝ 23600.0 հազ. դրամ, 2025թ. համար՝ 23600.0 հազ. դրամ, 2026թ. համար՝ 23600.0 հազ. դրամ:

Ֆոնդային բյուջեի եկամուտները բաղկացած են **հիմնական միջոցների իրացումից մուտքերից**, որոնք 2024-2026թթ. համար կանխատեսվում են 350000.0 հազ. դրամ՝ հաշվի առնելով համայնքի տարածքում օտարման ենթակա հողամասերի սահմանափակ լինելը:

ՀԱՄԱՅՆՔԻ 2024 - 2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՆԱԽԱԳԾՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԾԱԽՍԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

Օրենքով սահմանված կարգով համայնքի պարտադիր և կամավոր խնդիրների լուծմանն ուղղված սեփական և պատվիրակված լիազորությունների առավել արդյունավետ իրականացման նպատակով համայնքի 2024-2026 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրի ծախսային մասը կազմելու համար հիմք է հանդիսացել 2022-2026 թվականների համայնքի զարգացման հնգամյա ծրագրի դրույթները:

1. Ծրագրի անվանումը՝ «Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում»

✦ (Ծրագրի դասիչը՝ Բաժին 01, խումբ 1, դաս 1)

Ծրագրի իրականացման նպատակն է օրենքով սահմանված լիազորությունների շրջանակներում համայնքի բնակչությանը որակյալ ծառայությունների մատուցման համար համայնքապետարանի աշխատակազմի պահպանում:

Ծրագրի իրականացման արդյունքում **ակնկալվում է** Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի համար ստեղծել պատշաճ աշխատանքային պայմաններ, օրենքով սահմանված լիազորությունների և պարտավորությունների լիարժեք իրականացման համար:

2024 թվականի համար Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի պահպանման ծախսերը նախատեսվում են **734240.0 հազ. դրամ**, 2025 թվականի համար՝ **807502.1 հազ. դրամ**, 2026 թվականի համար՝ **859596.7 հազ. դրամ**:

Կառավարման ապարատի պահպանման ծախսերը հաշվարկելիս հաշվի են առնվել նախորդ տարիների ընթացքում կատարված փաստացի ծախսերը, ինչպես նաև կառուցվածքային ստորաբաժանումների կողմից իրենց բաժինների բնականոն գործունեության ապահովման համար անհրաժեշտ ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնումները, հաշվի է առնվել նաև ներքին աուդիտի և պահնորդական ծառայությունների գնման համար անհրաժեշտ միջոցները:

Աշխատավարձի ֆոնդում տարեկան կտրվածքով պլանավորվել է հավելյալ միջոցներ, որոնք կուղղվեն՝ պայմանագրային հիմունքով աշխատող գործակալների, փորձագետների և գործավարների աշխատավարձերի վճարմանը, ինչպես նաև միջոցներ են պլանավորվել ՎՋԵԲ ծրագիրը պատշաճ որակով իրականացնելու նպատակով համապատասխան մասնագետներ վարձելու համար:

2. Ծրագրի անվանումը՝ «Հեղափոխական և նախագծանախահաշվային աշխատանքներ»

(Ծրագրի դասիչը՝ Բաժին 01, խումբ 5, դաս 1)

Ծրագրի իրականացման նպատակն է համայնքի կարիքների համար իրականացվող քաղաքաշինական, շինարարական և հետազոտական աշխատանքների համար օրենքով սահմանված կարգով հետազոտությունների, փորձաքննությունների և նախագծանախահաշվային փաստաթղթերի ապահովում:

Ծրագրի իրականացման արդյունքում **ակնկալվում է** համայնքի կողմից նախագծանախահաշվային փաստաթղթերով հիմնավորված քաղաքաշինական ծրագրերի իրականացում՝ սահմանված օրենսդրական նորմերին համապատասխան:

2024թ. համար նախատեսվում է **18910.0 հազ. դրամ**, 2025թ. համար՝ **18910.0 հազ. դրամ**, 2026թ. համար՝ **18910.0 հազ. դրամ**:

Նախատեսվող գումարների հաշվարկները կատարելիս հաշվի են առնվել տվյալ ոլորտը կարգավորող իրավական ակտերով սահմանված նորմերի պահանջները և աշխատանքների ու ծառայությունների գործող շուկայական գները: Կազմվելու են նախագծեր և նախահաշվային փաստաթղթերի փաթեթներ, ինչպես նաև համայնքի գլխավոր հատակագծի փոփոխությունների փաթեթը:

3. Ծրագրի անվանումը՝ «Գույքի նկատմամբ իրավունքների գրանցման և փեդեկավարվողության տրամադրման հետ կապված ծառայություններ»

(Ծրագրի դասիչը՝ Բաժին 01, խումբ 6, դաս 1)

Ծրագրի իրականացման նպատակն է Գյումրի համայնքի սեփականություն համարվող հողամասերի և անշարժ գույքի չափագրում, դրանց նկատմամբ իրավունքների գրանցում ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեում:

Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է օրենքով սահմանված կարգով և ժամկետներում Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող պետական գրանցման ենթակա անշարժ գույքի հաշվառման և գրանցման հետ կապված գործընթացների ապահովում, համայնքի բնակչությանը քաղաքաշինության բնագավառում մատուցվող որակյալ ծառայությունների մատուցում:

2024թ. համար նախատեսվում է **25000.0 հազ. դրամ**, 2025թ. համար՝ **25000.0 հազ. դրամ**, 2026թ. համար՝ **25000.0 հազ. դրամ**:

Ծրագրի իրականացման համար պատասխանատու ստորաբաժանման կողմից անհրաժեշտ դրամական միջոցների հաշվարկները կատարելիս հաշվի են առնվել տվյալ ոլորտը կարգավորող իրավական ակտերի դրույթները, ինչպես նաև աշխատանքների և ծառայությունների գործող սակագները:

4. Ծրագրի անվանումը՝ «Վարկերի սպասարկում»

(Ծրագրի դասիչը՝ Բաժին 01, խումբ 6, դաս 1)

Ծրագրի իրականացման նպատակն է Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի կողմից ֆինանսավորվող «Գյումրու քաղաքային ճանապարհներ» ծրագրի իրականացման Տրանշ Ա և Բ չափաբաժինների համար նախատեսված 10.6 միլիոն Եվրո վարկային միջոցներից օգտագործված գումարների դիմաց տոկոսավճարների սպասարկման ապահովում:

Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է «Գյումրու քաղաքային ճանապարհներ» ծրագրի իրականացման համաձայնագրերով ստանձնած պարտավորությունների կատարում:

2024թ. համար նախատեսվում է **90000.0 հազ. դրամ**, 2025թ. համար՝ **95000.0 հազ. դրամ**, 2026թ. համար՝ **100000.0 հազ. դրամ**:

Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի (այսուհետ՝ ՎԶԵԲ) վարկային և դրամաշնորհային միջոցների հաշվին «Գյումրու քաղաքային ճանապարհներ» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) շրջանակներում հիմնանորոգվելու է Ծրագրում ընդգրկված հրապարակները և փողոցները, ինչպես նաև արդիականացվելու է քաղաքի արտաքին լուսավորության ցանցն ամբողջությամբ: Ծրագրի հիմնական նպատակն է՝ Գյումրի քաղաքում ունենալ անվտանգ երթևեկության կազմակերպման համար բարեկարգ փողոցներ և էներգախնայող արտաքին լուսավորության ցանց:

Տոկոսագումարի հաշվարկը կատարվում է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից և յուրաքանչյուր տարի ներկայացվում է համայնքապետարան վճարում իրականացնելու համար:

5. Ծրագրի անվանումը՝ «Աջակցություն զորակոչի և զորահավաքների կազմակերպման»

❖ (Ծրագրի դասիչը՝ Բաժին 02, խումբ 5, դաս 1)

Ծրագրի իրականացման նպատակն է համայնքի ղեկավարի լիազորությունների սահմաններում հանրապետական նշանակության զինավարժությունների և զորահավաքների կազմակերպման աջակցություն:

Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է օրենքով սահմանված կարգով զորակոչերին, զինավարժություններին և զորահավաքներին համայնքի զինապարտ քաղաքացիների մասնակցության ապահովում:

2024թ. համար նախատեսվում է **2400.0 հազ. դրամ**, 2025թ. համար՝ **2400.0 հազ. դրամ**, 2026թ. համար՝ **2400.0 հազ. դրամ**:

Նախատեսված միջոցների հաշվին ձեռք կբերվի վառելանյութ և գրենական պիտույքներ օրենքով սահմանված կարգով, համայնքի ղեկավարի լիազորությունների իրականացման համար: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է նաև գումար հատկացնել թվով վեց համատիրություններին ծանուցման տեղամասերի աշխատանքները կազմակերպելու համար, ինչպես նաև կիրականացվեն ընդհանուր բնույթի ծառայություններ:

6. Ծրագրի անվանումը՝ «Ճանապարհային փնտրություն»

(Ծրագրի դասիչը՝ Բաժին 04, խումբ 5, դաս 1)

Ծրագրի իրականացման նպատակն է հիմնովին կամ մասնակի վերանորոգել փողոցների, մայրերի և բակային տարածքների քանդված ասֆալտբետոնե ծածկը (ասֆալտապատում և խճապատում): Փողոցների նշագծման, ճանապարհային նշանների տեղադրման և քաղաքային երթուղային ցանցի և ավտոբուսային պարկի արդիականացման միջոցով ճանապարհային երթևեկությունը դարձնել անվտանգ ուղևորների, հետիոտնի և տրանսպորտային միջոցների շահագործման համար:

Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է քաղաքի փողոցները, մայրերը և բակային տարածքները դարձնել առավել բարեկարգ, ապահովել տրանսպորտային միջոցների անվտանգ երթևեկությունը:

2024թ. համար նախատեսվում է **1363931.9 հազ. դրամ**, 2025թ. համար՝ **1939420.9 հազ. դրամ**, 2026թ. համար՝ **1930843.9 հազ. դրամ**:

Հաշվի առնելով տրանսպորտային միջոցներին և բնակիչներին պատճառվող անհարմարություններն ու վնասները անհրաժեշտ է վերանորոգել անբարեկարգ տարածքները, դարձնել բարեկարգ, անվտանգ և անցանելի: Անվտանգ երթևեկության կազմակերպման համար տեղադրել ճանապարհային երթևեկության նշաններ և նշագծել փողոցները: Ձմեռային ամիսների համար անհրաժեշտ է ձեռք բերել աղ և խարամ, փողոցների և մայրերի մշակման աշխատանքների համար: Որոշ երկրորդական փողոցներ խճապատելու համար ձեռք կբերվի խիճ:

Յուրաքանչյուր տարի նախատեսվում է վերանորոգել շուրջ 35 փողոցների ասֆալտբետոնե ծածկ, շուրջ 10 սալաքարով հիմնանորոգված փողոցների երթևեկելի մասի սալաքարե ծածկույթ, կատարել շուրջ 30 փողոցների և հրապարակների ճաքալցման աշխատանքներ: Յուրաքանչյուր տարվա տարեվերջի ազատ մնացորդը օրենքով սահմանված կարգով բաշխելուց հետո մնացորդային ազատ միջոցների

հաշվին նախատեսում է ներկայացնել ենթակառուցների զարգացման նոր սուբվենցիոն ծրագրեր:

7. Ծրագրի անվանումը՝ «Աղբահանություն և սանիտարական մաքրում»

(Ծրագրի դասիչը՝ Բաժին 05, խումբ 1, դաս 1)

Ծրագրի իրականացման նպատակն է մշտապես մաքուր պահել համայնքի փողոցները, մայթերը, բակային տարածքները, հուշարձանների և այլ ինժեներական կառույցների հարակից տարածքները՝ պահպանելով ընդունված սանիտարահիգիենիկ պահանջները: Բացառել մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա թափոնների բացասական ներգործությունը:

Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է ունենալ մաքուր գրավիչ և սանիտարահիգիենիկ նորմերին համապատասխան տարածքներ, որոնք կօգտագործվեն համայնքի բնակիչների և այցելուների կողմից:

2024թ. համար նախատեսվում է **609583.0 հազ. դրամ**, 2025թ. համար՝ **615689.1 հազ. դրամ**, 2026թ. համար՝ **615689.1 հազ. դրամ**:

Ծրագիրը նախատեսվում է իրականացնել համայնքի կողմից հիմնադրված «Գյումրու կոմունալ ծառայություն» բյուջետային հիմնարկի միջոցով: Հիմնարկի գործառույթները, կառուցվածքը և հաստիքացուցակը հաստատվել են համայնքի ավագանու կողմից: Սանմաքման և աղբահանության աշխատանքները կազմակերպվելու են հիմնարկին պատկանող 14 աղբատար ավտոմեքենաների և այլ հատուկ տեխնիկաների միջոցով:

8. Ծրագրի անվանումը՝ «Կանաչ տարածքների հիմնում և պահպանում»

(Ծրագրի դասիչը՝ Բաժին 05, խումբ 6, դաս 1)

Ծրագրի իրականացման նպատակն է համայնքի կանաչ տարածքների խնամք և նոր կանաչապատ տարածքների ստեղծում, ապահովելով օդային ավազանի մաքրությունը: Քաղաքի բնակիչների և հյուրերի համար ստեղծել առավել բարենպաստ և գրավիչ հանգստի վայրեր:

Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է ստեղծվել առավել բարենպաստ պայմաններ բնակիչների հանգստի և ժամանցի համար, ապահովել օդի մաքրությունը, կանաչապատ տարածքներով միջավայրը կունենա ավելի գրավիչ տեսք:

2024թ. համար նախատեսվում է **126217.8 հազ. դրամ**, 2025թ. համար՝ **129217.8 հազ. դրամ**, 2026թ. համար՝ **129217.8 հազ. դրամ**:

Ծրագիրը նախատեսվում է իրականացնել համայնքի կողմից հիմնադրված «Գյումրու կոմունալ ծառայություն» բյուջետային հիմնարկի միջոցով: Կանաչապատման աշխատանքները կազմակերպվելու են հիմնարկին պատկանող տրանսպորտային միջոցներով:

9. Ծրագրի անվանումը՝ «Թափառող կենդանիների վնասազերծում»

(Ծրագրի դասիչը՝ Բաժին 05, խումբ 6, դաս 1)

Ծրագրի իրականացման նպատակն է Գյումրի քաղաքի տարածքում տարեցտարի ավելացող թափառող կենդանիների դեմ պայքարի իրականացում քաղաքացիների համար առավել անվտանգ պայմաններ ապահովելու համար:

Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է թափառող կենդանիների վնասազերծման միջոցով լուծել հանրային առողջությանն ու անվտանգությանը սպառնացող հիմնախնդիրը:

2024թ. համար նախատեսվում է 30000.0 հազ. դրամ, 2025թ. համար՝ 30000.0 հազ. դրամ, 2026թ. համար՝ 30000.0 հազ. դրամ:

Ծրագրի իրականացման նպատակով նախատեսվում է թափառող կենդանիների վնասազերծման (ստերիլիզացիա) ծառայությունների գնման համար հայտարարել մրցույթ, ինչպես նաև ստեղծել համապատասխան ապաստարան:

10. Ծրագրի անվանումը՝ «Արտաքին լուսավորության ցանցի շահագործում և պահպանում»

(Ծրագրի դասիչը՝ Բաժին 06, խումբ 4, դաս 1)

Ծրագրի իրականացման նպատակն է երեկոյան և գիշերային ժամերին համայնքի երթևեկելի և բակային տարածքների լուսավորում, շենքերի և կառույցների գեղարվեստական լուսավորության ապահովում:

Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է երեկոյան ժամերին առավել հարմարավետ և անվտանգ դարձնել փողոցային երթևեկությունը, ապահովել շինությունների և կառույցների գեղարվեստական լուսավորումն, առավել գրավիչ դարձնել դրանց տեսքը:

2024թ. համար նախատեսվում է 173400.0 հազ. դրամ, 2025թ. համար՝ 173400.0 հազ. դրամ, 2026թ. համար՝ 183400.0 հազ. դրամ:

Նշված ծրագրով նախատեսված ֆինանսական միջոցները ուղղվելու են թվով 7000 փողոցային լուսավորության և կառույցների գեղարվեստական լուսավորման լուսակետերի սպասարկմանն ու դրանց շահագործման ընթացքում սպառած էլեկտրաէներգիայի վարձի վճարմանը: Հիշյալ ծրագրով նախատեսվում է նաև ֆինանսավորել ամանորյա գեղարվեստական լուսավորման գոյություն ունեցող համակարգերի վերանորոգման աշխատանքները, ինչի համար անհրաժեշտ ապրանքները և նյութերը ձեռք են բերվելու համայնքի միջոցների հաշվին ըստ թերությունների ակտերով արձանագրված քանակների:

11. Ծրագրի անվանումը՝ «Համայնքի ընդհանուր օգտագործման տարածքների հիմնում, նորոգում ու պահպանում»

(Ծրագրի դասիչը՝ Բաժին 06, խումբ 6, դաս 1)

Ծրագրի իրականացման նպատակն է ստեղծել բարեկարգ հասարակական նշանակության տարածքներ, բակային տարածքներ հանգստի և ժամանցի համար, խաղահրապարակներ երեխաների համար: Բարեկարգ բակերում, այգիներում և պուրակներում մարդկանց հանգստի և ժամանցի նպատակով, ձեռք բերել և տեղադրել նստարաններ, զրուցարաններ: Ձեռք բերել փոքր աղքամաններ՝ բակային բարեկարգված տարածքներում, այգիներում, պուրակներում, հասարակական տրանսպորտի կանգառներում տեղադրելու համար:

Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է բակերը բերել բարեկարգ տեսքի, բարելավել բնակիչների հանգստի կազմակերպումը, ստեղծել հանելի պայմաններ երեխաների ժամանցի և խաղերի համար: Նստարանների և

գրուցարանների տեղադրմամբ առավել կազմակերպված դարձնել մարդկանց հանգիստն ու ժամանցը:

Աղբամանների տեղադրմամբ հորդորել մարդկանց աղբը նետել աղբամաններ և չաղտոտել շրջապատը, չվնասել կանաչ տարածքները:

Նշված ուղղությամբ 2024թ. համար նախատեսվում է **178210.7 հազ. դրամ, 2025թ. համար՝ 185210.7 հազ. դրամ, 2026թ. համար՝ 185210.7 հազ. դրամ:**

Ծրագիրը նախատեսվում է իրականացնել համայնքի կողմից հիմնադրված «Գյումրու կոմունալ ծառայություն» բյուջետային հիմնարկի միջոցով: Ընդհանուր օգտագործման հանրային տարածքների բարեկարգման աշխատանքները իրականացվելու են հիմնարկին պատկանող 9 ավտոմեքենաների և այլ հատուկ տեխնիկաների (տրակտոր, բարձիչ, ավտոաշտարակ, ավտոկուռնկ, ձյուն հավաքող մեքենա, գրեյդեր) միջոցով:

12. Ծրագրի անվանումը՝ «Բազմաբնակարան շենքերի բարեկարգման այլ աշխատանքներ»

(Ծրագրի դասիչը՝ Բաժին 06, խումբ 6, դաս 1)

Ծրագրի իրականացման նպատակն է աջակցել համայնքի տարածքում գործող համատիրություններին բազմաբնակարան շենքերի տանիքների և շքամուտքերի բարեկարգման աշխատանքներում:

Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է առավել բարեկարգ և շահագործման համար անվտանգ դարձնել բազմաբնակարան շենքերի շքամուտքերը, նկուղները և տանիքները:

2024թ. համար այս ուղղությամբ նախատեսվում է **414851.7 հազ. դրամ, 2025թ. համար՝ 262000.0 հազ. դրամ, 2026թ. համար՝ 290000.0 հազ. դրամ:**

Ծրագիրը կրում է շարունակական բնույթ՝ համատիրությունների առջև ծառացած բազմաթիվ խնդիրների լուծման համար անհրաժեշտ է յուրաքանչյուր տարի համատիրություններին հատկացնել աջակցություն կատարվող աշխատանքների ընթացքում օգտագործվող նյութերի գնման համար: Նախահաշիվները կազմվում են մասնագիտացված կազմակերպությունների կողմից համատիրությունների ներկայացված թերությունների ակտերի հիման վրա:

13. Ծրագրի անվանումը՝ «Սպորտի պահպանում և զարգացում»

(Ծրագրի դասիչը՝ Բաժին 08, խումբ 1, դաս 1)

Ծրագրի իրականացման նպատակն է համայնքային ենթակայության թվով 15 մարզադպրոցների պահպանման միջոցով կազմակերպել համայնքի սպորտային կյանքը, մինչև 15 տարեկան դեռահասների շրջանում զարգացնել ֆիզիկական դաստիարակությունը, հայտնաբերել և մեծ սպորտ ուղղորդել տաղանդավոր երեխաներին: Ստեղծել համայնքի մարզիկների պարապմունքների համար պայմաններ, ապահովել նրանց մասնակցությունը հանրապետական և միջազգային նշանակության միջոցառումներին, որոնք նպատակաուղղված են հանրապետության լավագույն մարզիկների բացահայտմանը: Այդ մարզիկները հետագայում ներգրավվելու են հանրապետության հավաքականների կազմում միջազգային մրցաշարերին մասնակցելու համար: Ըստ արժանվույն գնահատել միջազգային մրցաշարերում առավել բարձր արդյունք ցույց տված համայնքի մարզիկներին և նրանց մարզիչներին:

Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է պատանիների և երիտասարդության շրջանում մասսայական դարձնել սպորտը ու առողջ ապրելակերպը, նպաստել առողջ հասարակություն ունենալու գործին: Մինչև 14 տարեկան սովորողների և բարձր տարիքի երիտասարդների շրջանում ֆիզիկական դաստիարակության ապահովում: Մարզական դաստիարակչական ծրագրերի իրականացում մարզադպրոցներում: Միջազգային մրցաշարերում տարած հաղթանակների միջոցով առավել հայտնի դարձնել մեր երկիրը և քաղաքը:

2024թ. համար այս ուղղությամբ նախատեսվում է **639473.1 հազ. դրամ, 2025թ. համար՝ 639473.1 հազ. դրամ, 2026թ. համար՝ 648839.2 հազ. դրամ:**

Նախատեսվում է պահպանել համայնքային ենթակայության թվով 15 մարզադպրոցներ, կազմակերպել շուրջ 2600 սաների համար արտադպրոցական կրթական գործընթաց շուրջ 350 խմբակներում: Կոմունալ ծախսերը ևս ներառված են պահպանման ծախսերում: Տարբեր մարզաձևերից հանրապետությունում անցկացվող հանրապետական, միջազգային մարզական խաղերի, առաջնությունների, մրցաշարերի մասնակցության համար նախատեսվում է գործուղել քաղաքի մարզիկներին: Միջազգային մրցաշարերում տարբեր մարզաձևերից առավել բարձր արդյունք ցույց տված մարզիկների մարզիչներին նախատեսվում է վճարել կիսամյակային հավելավճարներ: Գումարներ են նախատեսվել նաև թվով երեք մարզադպրոցների համար համապատասխան տարածքներ վարձակալելու համար: Գումար է նախատեսվել նաև տարվա ընթացքում առավել ակնառու հաջողություններ ունեցած մարզիկներին խրախուսելու համար:

14. Ծրագրի անկանումը՝ «Գրադարանային ծառայություններ»

(Ծրագրի դասիչը՝ Բաժին 08, խումբ 2, դաս 1)

Ծրագրի իրականացման նպատակն է համայնքի գրադարանների պահպանման միջոցով բնակչության բոլոր խավերին ապահովել գեղարվեստական, մասնագիտական և տեխնիկական գրականությամբ: Գեղագիտական դաստիարակության ապահովում, կրթական համակարգի գործունեության օժանդակում:

Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է ավելացնել գրադարանային ծառայություններից օգտվողների թիվը՝ բարձրացնելով սպասարկման որակը, թարմացնել և արդիականացնել գրադարանային ֆոնդը:

2024թ. համար այս ուղղությամբ նախատեսվում է **57660.1 հազ. դրամ, 2025թ. համար՝ 60117.8 հազ. դրամ, 2026թ. համար՝ 62985.5 հազ. դրամ:**

15. Ծրագրի անվանումը՝ «Թանգարաններ և ցուցասրահներ»

(Ծրագրի դասիչը՝ Բաժին 08, խումբ 2, դաս 2)

Ծրագրի իրականացման նպատակն է համայնքի բնակչության բոլոր խավերին, համայնք այցելած զբոսաշրջիկներին և հյուրերին պատմամշակութային և գրական ժառանգության հետ ծանոթացում:

Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է ավելացնել համայնք այցելած զբոսաշրջիկների և հյուրերի թիվը, դրա արդյունքում համայնքը դարձնել ավելի գրավիչ և ճանաչված արտերկրում:

2024թ. համար այս ուղղությամբ նախատեսվում է **77321.7 հազ. դրամ, 2025թ.**

համար՝ 86717.5 հազ. դրամ, 2026թ. համար՝ 89934.6 հազ. դրամ:

Ոլորտն ունի թվով 5 թանգարան: Նախատեսված սուբսիդիայի գումարները ներառում են կազմակերպությունների աշխատողների աշխատավարձերը և պահպանման ու էքսպոնատների վարձակալության ծախսերը:

16. Ծրագրի անմանումը՝ «Համայնքային մշակութային կազմակերպությունների պահպանում»

(Ծրագրի դասիչը՝ Բաժին 08, խումբ 2, դաս 3)

Ծրագրի իրականացման նպատակն է համայնքում մինչև 15 տարեկան դպրոցականների շրջանում զարգացնել հոգևոր, երաժշտական, մշակութային դաստիարակությունը՝ գեղագիտական, ազգային հոգևոր մշակույթի ուսուցման, տաղանդավոր երեխաների հայտնաբերման համար:

Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է մինչև 15 տարեկան դպրոցականների և բարձր տարիքի երիտասարդների շրջանում մշակութային ստեղծագործական ունակությունների զարգացում, հոգևոր, գեղագիտական դաստիարակության ապահովում, կրթամշակութային, դաստիարակչական ծրագրերի իրականացում:

2024թ. համար նախատեսվում է 589675.3 հազ. դրամ, 2025թ. համար՝ 605652.6 հազ. դրամ, 2026թ. համար՝ 643550.2 հազ. դրամ:

Ոլորտի ծախսերը նախատեսվել են թվով 5 երաժշտական դպրոցի, մեկ արվեստի դպրոցի, մեկ պարարվեստի դպրոցի, մանկապատանեկան արվեստի պալատի պահպանման համար, որոնցում արտադասարանական դաստիարակություն են ստանալու 1745 սան: Համայնքային ենթակայությամբ գործում են նաև մեկ տիկնիկային թատրոն, երիտասարդական պալատ և մեկ փողային նվագախումբ:

Պահպանման ծախսերի համար հատկացված միջոցները կուղղվեն կազմակերպությունների զբաղեցրած տարածքների կոմունալ վարձերի վճարմանը, ընթացիկ նորոգմանը, գույքի ձեռքբերմանը, սաների անհատական պարապմունքների համար ուսուցիչներին հավելավճարների վճարմանը և այլ անհրաժեշտ ծախսերի ֆինանսավորմանը: Հատկացումները կիրականացվեն ըստ կատարած գանձումների կազմակերպությունների կողմից ներկայացված առանձին հայտերի հիման վրա:

17. Ծրագրի անվանումը՝ «Հուշարձանների վերանորոգում և պահպանում»

(Ծրագրի դասիչը՝ Բաժին 08, խումբ 2, դաս 7)

Ծրագրի իրականացման նպատակն է ստեղծել բարեկարգ տարածքներ մշակութային հանգստի համար, վերանորոգել և բարեկարգել մշակութային շինությունները և հարակից տարածքները:

Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է ապագա սերունդներին փոխանցելու համար կապահովվի քաղաքի պատմամշակութային ժառանգության պատշաճ պահպանումը և դրանք կունենան ավելի ներկայանալի տեսք համայնքի հյուրերի և զբոսաշրջիկների համար:

Նշված ուղղությամբ 2024թ. համար նախատեսվում է 72001.4 հազ. դրամ, 2025թ. համար՝ 43192.6 հազ. դրամ, 2026թ. համար՝ 53500.0 հազ. դրամ:

Լայն թափով ընթացող Կոմայրի պատմական կենտրոնի վերականգնման

աշխատանքներին զուգահեռ նախատեսվում է պատմամշակութային հուշարձանները և դրանց տարածքները բերել պատշաճ տեսքի, ինչպես նաև քաղաքի պատմամշակութային տարածքները առավել զփովիչ և հարմարավետ դարձնելու նպատակով նախատեսվում է կատարել հուշարձանների արտաքին տեսքի բարելավման աշխատանքներ: Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում հոդվածով նախատեսվել են միջոցներ հուշարձանների հարակից տարածքների բարեկարգման աշխատանքների համար:

18. Ծրագրի անվանումը՝ «Աջակցություն շահույթ չհետապնդող կազմակերպություններին»

(Ծրագրի դասիչը՝ Բաժին 08, խումբ 4, դաս 2)

Ծրագրի իրականացման նպատակն է աջակցել տարբեր ոլորտներում գործող քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կարողությունների զարգացմանն և հզորացմանը, համաֆինանսավորել համայնքային զարգացմանը միտված ծրագրերը:

Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է ունենալ ավելի հզոր հասարակական կառույցներ, որոնց գործունեությունը ուղղված կլինի քաղաքացիական հասարակության կայացմանը և դերի բարձրացմանը:

Նշված ուղղությամբ 2024թ. համար նախատեսվում է **21200.0 հազ. դրամ, 2025թ. համար՝ 21200.0 հազ. դրամ, 2026թ. համար՝ 21200.0 հազ. դրամ:**

Միջոցների հատկացումները համայնքային բյուջեից կիրականացվեն ոչ առևտրային կազմակերպությունների կողմից ներկայացված ծրագրերի հիման վրա:

19. Ծրագրի անվանումը՝ «Մշակութային միջոցառումների իրականացում»

(Ծրագրի դասիչը՝ Բաժին 08, խումբ 6, դաս 1)

Ծրագրի իրականացման նպատակն է համայնքի բնակիչներին, հատկապես երիտասարդությանը մասնակից դարձնել մշակութային կյանքին:

Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է համայնքային մշակութային միջոցառումների և տոնակատարությունների կազմակերպում, որոնց արդյունքում ժողովրդին, հատկապես երիտասարդությանը և համայնքի հյուրերին կմատուցվեն բարձրաճաշակ մշակութային ծառայություններ:

Նշված ուղղությամբ 2024թ. համար նախատեսվում է **30814.6 հազ. դրամ, 2025թ. համար՝ 30814.6 հազ. դրամ, 2026թ. համար՝ 30814.6 հազ. դրամ:**

Կախված միջոցառումների մասշտաբներից և նշանակությունից համայնքի ավագանու հաստատմանը կներկայացվեն միջոցառումների անցկացման ծախսերի նախահաշիվները: Բյուջեով հաստատված մյուս միջոցառումների անցկացումը կիրականացվի համայնքի ղեկավարի կողմից հաստատված նախահաշիվների հիման վրա:

20. Ծրագրի անվանումը՝ «Նախադպրոցական ուսումնական հաստատությունների պահպանում»

(Ծրագրի դասիչը՝ Բաժին 09, խումբ 1, դաս 1)

Ծրագրի իրականացման նպատակն է համայնքի 1-6 տարեկան երեխաների ցերեկային խնամք մանկապարտեզներում՝ ապահովելով նրանց ֆիզիկական, մտավոր և հոգևոր զարգացումը, առողջության ամրապնդումը, ներդաշնակ զարգացումն ու դաստիարակությունը, ինչպես նաև տարրական դպրոցական ուսուցման նախապատրաստումը:

Ծրագրի իրականացման արդյունքում **ակնկալվում է** համայնքի 1-6 տարեկան երեխաների ընդգրկում համայնքում գործող 24 մանկապարտեզներում, երեխա-հաճախումների թվի ավելացում, նախադպրոցական կրթական ծրագրերի իրականացման շրջանակներում երեխաների ընդհանուր զարգացման ապահովում:

2024թ. համար այս ուղղությամբ նախատեսվում է **779947.2 հազ. դրամ**, 2025թ. համար՝ **791583.2 հազ. դրամ**, 2026թ. համար՝ **809211.1 հազ. դրամ**:

Ոլորտի համայնքային կազմակերպությունները 24-ն են: Մանկապարտեզ հաճախող երեխաների թիվը կազմում է շուրջ 2500 երեխա: Նախատեսված սուբսիդիայի գումարը ներառում է կազմակերպությունների աշխատողների համար նախատեսված աշխատավարձը, ինչպես նաև համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարներից, որը կուղղվի զբաղեցրած տարածքի կոմունալ վարձերի վճարման և մանկապարտեզ հաճախող երեխաների սննդի ձեռքբերման ծախսերի ֆինանսավորմանը: Ծախսերը պլանավորվել են մանկապարտեզի սաների ութսունչորս տոկոս միջին հաճախելիության սահմաններում:

21. Ծրագրի անվանումը՝ «Նախադպրոցական ուսումնական հաստատությունների համաֆինանսավորում և սոցիալապես անապահով երեխաների վարձի փոխհատուցում»

(Ծրագրի դասիչը՝ Բաժին 09, խումբ 6, դաս 1)

Ծրագրի իրականացման նպատակն է համայնքի 1-6 տարեկան սոցիալապես անապահով և հատուկ արտոնություններից օգտվող երեխաների ցերեկային խնամք համայնքապատկան և միջազգային կազմակերպությունների կողմից համաֆինանսավորվող մանկապարտեզներում՝ ապահովելով նրանց վարձավճարների և պահպանման ծախսերի փոխհատուցումը:

Ծրագրի իրականացման արդյունքում **ակնկալվում է** համայնքի 1-6 տարեկան սոցիալապես անապահով երեխաների ընդգրկում համայնքապատկան և միջազգային կազմակերպությունների կողմից համաֆինանսավորվող մանկապարտեզներում, նրանց թվի ավելացում, որը կնպաստի անապահով ընտանիքների երեխաների բնականոն զարգացման ապահովմանը, անկախ սոցիալական վիճակից:

2024թ. համար այս ուղղությամբ նախատեսվում է **27747.4 հազ. դրամ**, 2025թ. համար՝ **27747.4 հազ. դրամ**, 2026թ. համար՝ **27747.4 հազ. դրամ**:

Ծրագրի իրականացումը կրում է շարունակական բնույթ: Նախատեսվում է

ավագանու սահմանած արտոնությունների փաթեթի հիման վրա սոցիալապես անապահով և հատուկ արտոնություններից օգտվող երեխաներին ընդգրկել ծրագրում: Ծրագրի հատկացումներում կարող են կատարվել փոփոխություններ կախված արտոնություններից օգտվող երեխաների թվից:

22. Ծրագրի անվանումը՝ «Նախադպրոցական ուսումնական հասարակությունների կառուցման համաֆինանսավորում, ընթացիկ վերանորոգում, գույքի ձեռք բերում և պահպանում»

(Ծրագրի դասիչը՝ Բաժին 09, խումբ 6, դաս 1)

Ծրագրի իրականացման նպատակն է համայնքի մանկապարտեզներ հաճախող երեխաների համար ապահովել օրենքով սահմանված նորմերին համապատասխան բարենպաստ պայմաններ:

Ծրագրի իրականացման արդյունքում **ակնկալվում է** համայնքում գործող թվով քսանչորս մանկապարտեզները ապահովել հաստատություններ հաճախող երեխաների կրթական գործընթացի կազմակերպման համար պատշաճ պայմաններով:

2024թ. համար այս ուղղությամբ նախատեսվում է **18467.3 հազ. դրամ**, 2025թ. համար՝ **20859.7 հազ. դրամ**, 2026թ. համար՝ **27604.6 հազ. դրամ**:

Նախատեսվում է համայնքի բյուջեից ֆինանսավորել մանկապարտեզների զբաղեցրած տարածքների ընթացիկ նորոգման, գույքի, տնտեսական ապրանքների ձեռք բերման և պահպանման համար անհրաժեշտ այլ ծախսերը: Ֆինանսավորումը կիրականացվի մանկապարտեզների կարիքների հիման վրա, նրանց կողմից ներկայացրած հայտերով:

23. Ծրագրի անվանումը՝ «Հարազատ չունեցող անձանց և սոցիալապես անապահով ընտանիքների համար հուղարկավորության կազմակերպում »

(Ծրագրի դասիչը՝ Բաժին 10, խումբ 3, դաս 1)

Ծրագրի իրականացման նպատակն է Գյումրի համայնքի բյուջեի միջոցների հաշվին, հարազատ չունեցող անձանց հուղարկավորության կազմակերպում:

Ծրագրի իրականացման արդյունքում **ակնկալվում է** հասարակության մեջ սոցիալական լարվածության մեղմում, անապահով ընտանիքների սոցիալական աջակցությանն ուղղված առավել նպատակային և հասցեական հատկացումների կատարում, սոցիալական աջակցության ծրագրերի իրականացման գործում տեղական ինքնակառավարման մարմինների դերի մեծացում, սոցիալապես անապահով խավերի համար լրացուցիչ սպասարկման և ծառայությունների մատուցում:

2024թ. համար նախատեսվում է **2547.0 հազ. դրամ**, 2025թ. համար՝ **2547.0 հազ. դրամ**, 2026թ. համար՝ **2547.0 հազ. դրամ**:

Ծրագրով նախատեսվում է փաստաթղթերի հիման վրա սոցիալապես անապահով ճանաչված և (կամ) հարազատ չունեցող անձանց համար կազմակերպել հուղարկավորության ծառայություններ համայնքի բյուջեի միջոցների հաշվին: Հուղարկավորության ծառայությունները մատուցվելու են համայնքի հարյուր տոկոս մասնակցությամբ հիմնադրված «Հավերժ հիշատակ» ՓԲԸ-ի կողմից:

24. Ծրագրի անվանումը՝ «Աջակցություն ռազմական գործողությունների մասնակիցներին և նրանց ընտանիքներին»
(Ծրագրի դասիչը՝ Բաժին 10, խումբ 4, դաս 1)

Ծրագրի իրականացման նպատակն է Գյումրի համայնքի բյուջեի միջոցների հաշվին շարունակական ծրագրերի միջոցով արցախյան գոյամարտի, Հայրենական Մեծ և 2020 թվականի արցախյան պատերազմի մասնակիցներին, հաշմանդամներին և նրանց ընտանիքի անդամներին տոնական օրերին աջակցություն:

Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է հասարակության մեջ սոցիալական լարվածության մեղմում, ազատամարտիկներին և հայրենական պատերազմի վետերաններին, ինչպես նաև նրանց ընտանիքներին դրամական օգնության տրամադրում:

2024թ. համար նախատեսվում է **36450.0 հազ. դրամ**, 2025թ. համար՝ **44450.0 հազ. դրամ**, 2026թ. համար՝ **44450.0 հազ. դրամ**:

Ծրագրով նախատեսված գումարները պլանավորվել են նախորդ տարիներին կատարված փաստացի ծախսերի և 2020 թվականի պատերազմական գործողությունների ընթացքում զոհված զինծառայողների թվի հիման վրա, իսկ դրանց հատկացումները իրականացվելու են հիշյալ խմբերի հաշվառում իրականացնող տարածքային զինկոմիսարիատի տրամադրած ցուցակների հիման վրա՝ մայիսյան և ամանորյա տոներին ընդառաջ:

25. Ծրագրի անվանումը՝ «Բնակարանային ապահովում»
(Ծրագրի դասիչը՝ Բաժին 10, խումբ 6, դաս 1)

Ծրագրի իրականացման նպատակն է ծրագրի շարունակականության ապահովման միջոցով յուրաքանչյուր տարվա համար՝ նախկինում օտարման ծրագրերի շահառու հանդիսացող անձանց կողմից վարձակալած բնակարանների վարձի փոխհատուցում, ինչպես նաև սոցիալապես անապահով ընտանիքներին և միայնակ թոշակառուներին բնակարանով ապահովում:

Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է հասարակության մեջ սոցիալական լարվածության մեղմում, համայնքի ստանձնած պարտավորությունների կատարում, համայնքի բնակչության խոցելի խավերի նկատմամբ:

2024թ. համար նախատեսվում է հատկացնել **1260.0 հազ. դրամ**, 2025թ. համար՝ **1260.0 հազ. դրամ**, 2026թ. համար՝ **1260.0 հազ. դրամ**:

Բնակարանների վարձակալության վճարի փոխհատուցումները տրամադրվում են այն ընտանիքներին, որոնք տարբեր ծրագրերի իրականացման հետևանքով ազատել են իրենց ժամանակավոր կացարաններով ծանրաբեռնված հողամասերը, իսկ համայնքը ստանձնել է նրանց կողմից վարձակալած բնակարանների վարձի փոխհատուցման պարտավորություն մինչև պետական ծրագրերի շրջանակներում հիշյալ ընտանիքներին բնակարաններով ապահովումը, որի համար էլ նախկինում կնքվել են համապատասխան պայմանագրեր: Ծրագրի այս բաղադրիչի շահառու են հանդիսանում թվով չորս ընտանիքներ, որոնց տարեկան կտրվածքով վճարվում է 1260.0 հազ. դրամ փոխհատուցում:

26. Ծրագրի անվանումը՝ «Աջակցություն սոցիալապես անապահով ընտանիքներին»

(Ծրագրի դասիչը՝ Բաժին 10, խումբ 7, դաս 1)

Ծրագրի իրականացման նպատակն է Գյումրի համայնքի բյուջեի միջոցների հաշվին, գրենական պիտույքների տրամադրում, կենցաղ սպասարկման ծառայությունների մատուցում և դրամական նպաստների վճարում: Երեխաներին, միայնակ տարեցներին և սոցիալապես անապահով այլ խավերին տոնական օրերին աջակցություն:

Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է հասարակության մեջ սոցիալական լարվածության մեղմում, անապահով ընտանիքների սոցիալական աջակցությանն ուղղված առավել նպատակային և հասցեական հատկացումների կատարում, սոցիալական աջակցության ծրագրերի իրականացման գործում տեղական ինքնակառավարման մարմինների դերի մեծացում, սոցիալապես անապահով խավերի համար լրացուցիչ սպասարկման և այլ ծառայությունների մատուցման իրականացում:

2024թ. համար նախատեսվում է **26500.0 հազ. դրամ**, 2025թ. համար՝ **26500.0 հազ. դրամ**, 2026թ. համար՝ **26500.0 հազ. դրամ**:

Ծրագիրը համարվում է շարունակական, յուրաքանչյուր բյուջետային տարի նախատեսվում է գումար հատկացնել ուսումնական տարվա կապակցությամբ գրենական պիտույքների ձեռք բերման և սոցիալապես անապահով ընտանիքների թվով 1000 երեխաներին տրամադրման համար: Միջոցներ են նախատեսվել նաև սոցիալապես անապահով անձանց դրամական օգնությունների հատկացման համար: Դրամական օգնությունների տրամադրման համար շահառուների ընտրությունը կատարվում է համայնքապետարան ներկայացված դիմումների հիման վրա, իսկ շահառուների վերջնական ցուցակը և յուրաքանչյուրին հատկացվող դրամական աջակցության չափը որոշվում է այդ նպատակի համար ստեղծված հանձնաժողովի եզրակացության առկայությամբ: Ծրագրի բյուջեով գումարներ են նախատեսվել նաև տարբեր բարեգործական կազմակերպությունների կողմից իրականացվող սոցիալական ծրագրեր համաֆինանսավորելու համար:

[illegible]

[illegible]

[illegible]

[illegible]

[illegible]

[illegible]

[illegible]

[illegible]

[illegible]

[illegible][illegible]

[illegible]

[illegible]

